

## ՊԵՏՐՈՍ ՌԴԻԱՄԵՍՆ,

Անցեալ տարի լրացաւ Պետրոս Աղամեանի մահուանտասնամեակը, Ալդ օրը նրա լիշտակը լարգեց միմիալն հայ երիտասարդութեան մի խումբ, իսկ ամբողջ հայ հասարակութիւնը ոչնչով չը լաւերժացրեց.

Հայկական բնմի ալդ կորուսով անփոխարինելի է համարւում առ ալժմ: Նրան տեսնողները հիշատափուած են նաւում ապագալին, իսկ չը տեսնող երիտասարդութիւնը իւր հոգու աչքերով աշխատումէ տեսնել մեծ ողբերգուի ուրուականը՝ մի գոյափար կազմելու համար նրա տաղանդի մասին:

Հայ հասարակութեան անտարրեր և անփոլթ վերաբերելունքը դէպի ալպիսի մեծ տաղանդի լիշտակը դրդեց մեզ մի քանի խօսք նուիրել վաղաժամ կորորած Աղամեանի անուանը հայ հասարակութեանը մի անգամ էլ լիշեցնելու, թէ ինչ նշանակութիւն ունեցաւ նա հայ թատրոնի և ղեղարուեստի համար:

Հայ թատրոնի հորիդոնը ծածկուած էր խիս ամպերով, թիֆլիսի բնմի փօքրաթիւ աստղերը անցել էին լաւիտենականութիւն, իսկ մնացածները կորցնելով առաջիններին, կորցրել էին իրանց նշանակութիւնը, ցիր ու ցան էին եղել ամպամած երկնքի տակ, նրանք թափառում էին իրեն ուրուականներ, հանգստութիւն չը դանելով իրանց համար, իսկ ալդ երկնքին նալող և նրա տակը ապրող հայ հասարակութիւնը կորցրել էր իր հաւատը և լուսը ապագալի նկատմամբ թէ մի օր պալճառ արեց կը ծագի..

Հայոց թատրոնը իր չնչին խմբով և բեպերտուարով անհետանալու վրալ էր, հաղիւ էր պահպանում իր գոլութիւնը և անունը, թատրոնի ալդ բեկորները և հայ դրամատուրգներ ալլ ևս չէին կարողանում բաւականութիւն պատճառել հայ հասարակութեանը, սակալն զգացւում էր մի ինչը պահանջ գէպի առաջ ընթանալու, Ալդ ժամանակը մի քանի բարեմիտ մարդկանց մէջ միտք է լղանում վերականգնել ու կերպարանափոխել հայոց թատրոնը և զնել նրան աւելի հաստատ հիմունքի վրալ Ալս նպատակով ընտրում է մի թատրոնական մասնաժողով, որը կազմում է տեղական մշտական հայ դերասանական խումբ, հրաւիրելով Պօլսից պ. Աղամեանին, օր. օր. Աստղիկին և Սիրանոլչին, Ալդ 1879 թուին էր. Թատրոնի

հորիզոնի վրա երեացին նոր լուսատու մարմիններ. դրանք Պօլսի մեր հւերերն էին. սրանցից մէկը՝ Պետրոս Աղամեանը — պէտք է դառնար լուսատու ասալ, որի նմանը դեռ չէր երեացել հալոց երկնակամարի վրա.

Այս վալրկեանը թանկ էր թէ հալթատրոնի և թէ Պետրոս Աղամեանի համար. երկուսի կեանքի մէջն էլ լեղափոխութիւն պէտք է առաջ գար, հալ թատրոնը պէտք է մտցնէր նոր շկօլա, իսկ Պետրոս Աղամեանը իրը դերասան պէտք է ընդունէր նոր ուղղութիւն.

Պ. Աղամեանը եկաւ Թիֆլիս իր բեսերտուարով. նա հոգով և ուղղութեամբ Պօլսու զաւակ էր, իսկ Օսմանեան կալսութիւնը պատմական հանգամանքների չնորհիւ խիստ կերպով ենթարկուել էր Փրանսիական կեանքի ազդեցութեան, ուրեմն և թատրոնական գեղարուեստը պէտք է լինէր այս ազդեցութեան ներքու և սա ամօթալի էլ չէր, քանի որ ուրիշ աւելի քաղաքակարթուած երկիրներում էլ Փրանսիացոց շկօլակի ազդեցութիւնը մեծ էր.

Իսկ Փրանսիական բեմի վրա իշխում էին երկու ուղղութիւն՝ մէկը հին դասական (կլասիքական) և միւսը նոր իրական. վերջը այս երկու ուղղութիւնների մէջ երեան եկաւ րումանտիքական «ուղղութիւնը», որը բեմի վրա արտալարուած մելոդրամի ձեռով; Մենք չենք թուի այս ուղղութիւնների լատկանիշները, այլ միայն կասենք, որ այս ուղղութիւնների ազդեցութիւնը սկզբից և եթ երեսում էր հանգուցեալ Պետրոս Աղամեանի խաղի մէջ՝ պերճ առողջանութիւն, որ դասական զպրոցի գլխաւոր պալմանն է կազմում; դեռի քննութիւնը և ուսումնասիրութիւնը տեղ տեղ համեմատ է ֆէկտոներով:

Աղամեանի մէջ կար լաւ գերասանի բոլոր լատկութիւնները, և հաւ հասարակութիւնը առաջին ներկալացման զիկերը զգաց, որ իր առաջ կանգնած է մի տաղանդ, նա միայն երաստոն տարեկան էր և ապագան նրան էր պատկանում. Ազգակս ել եղաւ. Նա հանդիսացած իրը վեհանորոգիչ, որը լեղափոխեց մինչև այն ժամանակ հաւ բեմի վրա տիրող անզուն ուղղութիւնը, եղանակով իօսելը և ալլն:

Աղամեանը օժտուած էր բնութիւնից, նա ունէր իւր մէջ լառաջադիմնուր բոլոր լատկութիւնները. նրան հարկաւոր էր մի մղիչ ոլժ, և նա արդ ուժը զտաւ Թիֆլիսում. արդ մղիչ ոլժն էր Թիֆլիսի հաւ հասարակութիւնը և մասամբ էլ մատուցը.

Հանդուցեալը շատ անգամ պատկառանքով խոստովանուել է, թէ Թիֆլիսը դարձել է նրա լառաջադիմութեան պատճառը, որը միշտ առաջ է մղել և բարձրացրել իրան. թէ ինքը զուրկ էր նոյն իսկ միջնակարգ կրթութիւնից, բայց անընդհատ աշխատութեան, ընթերցասիրութեան և ուսումնասիրութեան չնորհիւ նա բարձրացաւ փառքի այն գա-

դաթնակէտին, որի մասին երազել անգամ չէր մինչև Թիֆլիս գալը, տաղանդը և աշխատանքը ձեռք ձեռքի տուած առաջ էին ընթանում:

Աղամեանը Թիֆլիսում ծանօթացաւ ոուս կլասիք զըրուածներին և Շէքսպիրի հետ, որը պէտք է կազմէը նրա ապագայ փառքի պահը. նա ալսեղ աշքը բացեց և հասկացաւ իր կոչումը. նա հում նիւթ էր և նրանից կարելի էր ամեն ինչ ձուլել:

Նրեք տարի շարունակ (1879—1881) Թիֆլիսի հայ հասրակութիւնը հանում էր Աղամեանի տաղանդաւոր իսպով նա դարձաւ իդէալ հայ երիտասարդութեան համար. ամեն մէկը աշխատում էր Աղամեանին նմանուել, նրա նման կարդալ. նրա նման խօսիլ, նրա նման վարուել, միով բանի, կարելի է ասել, ամբողջ Թիֆլիսը սիրահարուած էր Աղամեանի վրայ. իսկ ապագիտի բուռն սէր ու համակրանք ամենքին չի վիճակում. Թիֆլիսի հայ հասարակութիւնը մեծ սիրով էր լաճախում ներկալացումներին. անքան հոչակուց նրա տաղանդը, որ ներկայացումներին լաճախ կը տեսնէիք նաև օտարազգիներ:

Աղամեանի խաղացած դերերի թիւն հասնում էր մօտ 250 ի, որոնց մէջը նշանաւոր տեղ բռնեցին Շէքսպիրի՝ Համլէտը, Օթէլօն, Արքայ Լիոր, Շիլերի՝ Ֆրանցը (աւազակների մէջ), Պրախուելի՝ Նարգիսը, Գուցկովի՝ Ուռիել Ակօստան, 'Իմամալի' Քինը, Հիւզոի'—Անջէլօն, Ռիշի—բլազը, Լերմոնտովի՝ Արքէնինը (Դիմակահանդէսից), 'Րիբուդովի'—Զաթկին (Շտելքից պատուհաս») և ալլն..

Աղամեանը Շէքսպիրի տիպերը խաղում էր հաւասար լաջողութեամբ, բայց մեր համեստ կարծիքով Համլէտը նրա խաղացած դերերի մէջ գլուխ զործոցն էր, նրա ձականը զարդարող պսակի մէջ ամենանշանաւոր և փալուն սկը. թէ ինչ աստիճան գեղարուեստօրէն էր խաղում ալլ դերը, իսկուն կը տեսնենք:

1883 թ. պ. Աղամեանը հրաւիրում է Մոսկովա և խկոյն եր վրայ է դարձնում մամուլի ուշադրութիւնը. նա խաղում է Համլէտ և «Մասկովսկի Ենծոնութիւն» մէջ քննադատը գլում է ի միջի ալլոց հետեւալը՝ «ոչ Ռոսսուն և ոչ էլ հռչակաւուր Սալլինին հաւասարում են Աղամեանին Համլէտի դերում». նովնպէս գովարանում են և միւս լրագիրները.

Ալնուետե անցնում է Պետերբուրգ, ուր նորնպէս, բայցի միւս կլասիք դերերից, խաղում է Համլէտը, որի մասին Ալեքսանդր Հանդէսը զրում է հետեւալը՝ «հայ դերասան պ. Աղամեանը, առաջին անգամ բեմ զուրս զալով Համլէտի դերում, լիովին արդարացրեց ալն գովասանական լայտարութիւնները, որ հրատարակում էին Մոսկուայի լրագիրներում. Առանց ընդօրինակելու, առանց նմանուելու Համլէտի հռչա-

կաւոր կատարողներին, նա ստեղծել է լիովին գեղարուեստական մի տիպ՝ ամենամարամասն կերպ։ ուսումնասիրուած և կոկուած հրաշալի նրբութեամբ։ Ներկալայցման ալդ ինչնազիւտ սե հաւականութիւնը նրանումն է կալանում, որ Աղամեանը Համլէտի խօսքերում և գործողութիւններում մոցրել է աելի շատ կիրք և կորով, քան Ռոսսին և աշխարհահռչակ Սալվենին։ Աղամին անգամն է, որ ուսաց բեմի վրակ մի ալսպիսի բան ենք տեսնում. վատ չը լինի, եթէ մոր «պալատական» գերասանները են և են է ին և բան սովորէ ին իրանց հաւարուեստակցից, որ ինչպէս կարծում ենք, թէ վկալական չունի, բայց ունի գեղարուեստի նուրբ ճաշակ և ղերասանա. կան բարձր տաղանդ։

Աղամեանը զալիս է Ռդեսա, խաղում է դարձեալ Համլէտ և «Օդեսկիա Ենտեմու» լրագիրը աւելի է գովում քան միւս-ները՝ աշափազանց լափշտակուած ենք Աղամեանի նշանաւոր խաղով և զեռ չենք սթափուել նրա ձանի դիւթ ական հընչիւններից, կատալեալ համարձակութեամբ կարելի է ասել թէ Համլէտի դերում Աղամեանի լառաջադիմութիւնը գերադանցեց ասեն ակնկալութիւն։

Ոչ Սալվինի, ոչ Պոսարտ, ոչ Բարնալ, և վերջապէս ոչ մի աշխարհահռչակ դերասան մեզ մեզ չեն տուել. աչնպիսի անխարդախ և կատարելատիպ Համլէտ, որը տուեց մեզ պ. Աղամեանը։ Միւս լրագիրները նույնպէս զովասանքով խօսեցին նրա խաղացած միւս կլասիք դերերի մասին, որնցց կարծիքները կարելի է գտնուլ Աղամեանի կենսագրութիւնների մէջ։

Աղամեանը շրջեց Ռուսաւտանի համարեա բոլոր նշանաւոր քաղաքները՝ Պետերբուրգ, Մոսկուա, Օդէսա, Խարկով, Կիէվ, Կազան, Քիչնեվ, Թէոդոսիա, Սիմֆերոպոլ, Աստրախան և ամեն տեղ գտաւ մեծ ընդունելութիւն և մեծ գովեստների արժանացաւ. գովարանում էին ոչ միայն Համլէտը, ալ նրա խաղացած բոլոր դերերը։

Աղամեանին դասեցին միծ տաղանդների շարքը և երբ 1886 թ. նա վերադարձաւ Թիֆլիս, հաւ հասարակութիւնը ամելի ոգնորուած հանդիպեց նորան, թատրոնը նորից կեանք ստացաւ. 1886—1887 թ.

1887 թ. ինչպէս և 1881 թ. Աղամեանի Թիֆլիսից հեռանալուց իւտոր, հալ թատրոնը ընկաւ հոգևարք դրութեամբ մէջ, որի առթիւ հանգուցեալը իր մի բարեկամին մասնաւոր նամակի մէջ գրում է՝ թէ օչալոց թատրոնի մեանելուն վրակ մի ցաւիք աչքի առաջ ունենալով նորա նախկին օրրանը՝ որ գերեզմանափորերով էր շրջապատուած. թէ Աստուած ինձ կեանք և առողջութիւն չնորհէ, կրկին (կուզամ շուտով և կը լարուցանեմ թատրոնը)։ Բայց ափսոս որ ալս ցանկութիւնը մնաց անկատար։

Պետրոս Աղամեանը բացի գերասան լինելուց մեզ համար

ունեցաւ և ուրիշ նշանակութիւն. նա երնան եկաւ իբր միաց-  
նող երկու բեմերի՝ Պօլսի և Թիֆլիսի, որոնք զարգանում էին  
առանձին առանձին. երկուսն էլ ունէին իրանց դերասան-  
ները, բեպերտուարը, դրամստուրզները, բայց սրանց մէջը  
չարաբերութիւն չը կար. Աղամենաւ ը շաղկապ հանդիսացաւ.

Նա իր վերին ասաիճանի գեղարուեստական նուրբ խա-  
ղով զարգացրեց Թիֆլիսի հայ հասարակութեան ճաշակը և  
հետաքրքրութիւն զարթեցրեց դէպի եւրոպական դրականու-  
թիւնը:

Աղամենանը իր բեպերտուարով ազգեց և ապագու հայ  
թատրոնի բեպերտուարի վրաւ:

Նա Առևաստանի հայրանակ դաւառներում իսկական  
դրատիքական գեղարուեստի ճաշակ զարգացրեց և նոցա մէջ  
մալրենի բեմի սէրը զարթեցրեց:

Աղամենանը, իբր տաղանդաւոր գերասան, առաջինը ե-  
ղաւ, որ թատերական գեղարուեստի չնորդիւ ծանօթացրեց  
ուսւ հասարակութիւնը հայ թատրոնի հետ,

Նա պարզեց հայ լեզուի առավանութեան խնդիրը. հաս-  
տատեց օտարների առաջ, որ հայ լեզուն նոլնքան քալցրա-  
հնչյւն է որքան և իրանցը. նա բառերը այսպէս գեղեցիկ  
կերպով չետում էր, որ հայ լեզուն կրկնակի գեղեցկանում էր  
ոչ մշակն հայերի, ալլ նոյն իսկ օտարների համար:

Աղամենանը ծաղկեցրեց հայ բեմը և ինքն էլ ծաղկեց  
Բայց ամեն վարդ էլ ունենում է իւր աշունը, ափսոս որ սրա  
աշունը վաղաժամ էր...

Աղամենանը մեռաւ,,, ալր. մեռաւ բայց մրմիալն իբրև  
դերասան. զերասանը նշանակութիւն ունի քանի կենդանի է,  
իսկ մասնելուց հետո մի առ ժամանակ մրախն նրան լիշտում է  
եկող սերունդը, ալուունետե մոռացութեան է տրում. Ոչ մի  
լեզուով, ոչ մի խօսքով, ոչ մի զգացմունքով չի կարևի պատ-  
մել, բացարել տաղանդաւոր խաղի այն ազդեցութիւնը, ինչ  
որ կարող է տալ նա իր կենդանի խաղով. ալդ կողմից դե-  
րաս անը անրազան է, ոչ մի հետք չի թողնում, բայց իր ծանր  
խայլ և փոշ պսակից. այն ինչ նրա եղբարակիցները, ո-  
րոնք նոյնպէս ծառալում են գեղնցկին՝ երաժշտութեան, գե-  
ղեցիկ գրականութեան, նկարչութեան ծառալոյները կենդա-  
նի են մնում ժողովրդի լիշտութեան մէջ մահից լետու էլ ի-  
րանց ստեղծադորդութեամբ, իրանց երերով.

Աղամենանը արտիստ էր բառի բուն նշանակութեամբ.  
Նա սիրում էր գեղարուեստը Եր բոլոր մասերով և ալդ ամե-  
նին հասել էր միախն ինքնակ և բթութեամբ. սա մի չօ-  
շափնչի օրինակ է ապագաւ սերնդի համար... Աղամենանի բա-  
նաստեղծութիւններից համեմատաբար ընտիրները վերջին  
տարիներում գրածներն են, որոնք մնացել են անտիպ. սոցա  
մէջ կայ աւելի բանաստեղծութեան ճաշակ և միտք քան ա-  
ռաջուալ գրածների մէջ, իսկ իբր նկարագրութիւն հիանալի

են։ Նա իր նկարիչ լաւ պօրտրետիստ էր, նա մանաւանդ աննման էին սրա նկարները։

Իրը քննազատ ուշադրութեանցարժանի է նորա Շէքս-պիլը և նրա Համեշը քննադատութիւնը, որի մէջ երեսում է թէ որքան բազմակողմանի կերպով ուսումնասիրել է Շէքսպի-րի Համեշը և ինչ աղքիւրներից։

Ահա թէ ինչպիսի հոչտկ հանեց նա կովկասում և Ռուս-սաստանում իր տասնտարեալ բեմական գործունէութեամբ, ինչ աստիճան բարձրացրեց բեմական գեղարդուեստի նշանակու-թիւնը թէ հայերի և թէ օտարների աչքում։

Ակադեմի մեր բեմի շատ թէ քիչ առաջ ընթանալը, բեպերտուարի հարստութիւնը, Թիֆլիսի հայ հասարակութեան էստետիքական ճաշակի զարգացումը, հայ դերասանների մի ստիճան բարձրանալը պարտական ենք մասամբ Աղամեանի անուանը։

Եւ ալսքան ծառակութեան փոխարէն հայ հասարակու-թիւնը մտածեց արդիոք մի չնչին բանով լաւերժացնելու տա-ղանդաւոր արտիստի լիշտակը, որը ալսօր հայ ազգի պար-ծանք է համարում։

Հիմնեց արդիոք արուեստգիտական մի ուսումնարան կամ թատրօն լանուն Աղամեանի, ուղարկեց ուսանողներ թատ-րոնական դպրոց, կազմեց մի ֆոնդ ծեր և աղքատ դերասան։ Ների համար, կանգնեցրեց զոնէ մի չնչին վալելուչ արձան նորա շիրմի վրար։

Հայ հասարակութիւնը ոչ մէկն էլ չի արել և ընդունակ էլ չէ անելու։

Դեռ նա արդքան չի բարձրացել բարուապէս և մտաւո-րապէս, որ կարողանալ գնահատել գէթ մահուանից լետող ի-րան սննդող մտաւոր մշակներին։ Մտքի մշակը բաւական չէ որ կենդանութեան ժամանակ մատնուած է անուշադրութեան, լաճախ և աղքատութեան, մահից լետող էլ չի կարող մի ա-ռանձին լարգանքի լուսալ։

Աղամեանի հոգեհանգստին ներկաւ էին երեք քահանակ և մի տասն էլ երիտասարդ. ահա քեզ հայութիւն. եթէ մի արտակարգ տաղանդի վիճակը սա է հայերիս մէջ, դժուար չէ երեսակալել միւս մահկանացուների վիճակը. Եւ մենք ցանկանում ենք, որ գեղարդուեստը մեզանում զարգանալ... Միթէ սա ցնորք չէ։

Դ. ՄԻՐԱԳԵԱՆՑ